

ՀԱՆԳՐՈՒՄՍ ՏԻՐԱՄԱՅՐ ԱԶՆԻՒ ԳԱՐԻԿԵԱՆԻ

Յետ կարճատե հիւանդութեան, 22 Յուլիս 1963ին, Նիւ Եորքի մէջ իր մահկանացուն կնքեց Տիրամայր Ազնիւ Գարիկեան:

Հանգուցեալը ծնած էր Սեբաստիա, 1892ին, եւ դուստրն է Սեբաստիոյ համբաւաւոր ընտանիքներէն սեղանաւոր Ահարոն Նորարեւեանի:

1915ի տարագրութեան ահաւոր դառնութիւնները ճաշակելէ յետոյ, 1919ին Հալէպի մէջ կ'ամուսնանայ բազմամեայ ուսուցիչ, բանասէր եւ պատմաբան Կարապետ Գարիկեանի հետ, որմէ կ'ունենայ երկու զաւակներ, Հոգշ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան, որ մեզ ամերիկացիներու մօտէն ծանօթ է իբրեւ Նուիրակ Ս. Երուսաղէմի Պատրիարքութեան եւ Տեսուչ Ս. Թարգմանչաց Վարժարանի, ինչպէս նաեւ Պր. Մխիթար Գարիկեան, որ Նիւ Եորքի ծանօթ ազգայիներէն է:

Յուդարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Եղիշէ Մ. Վրդ. Սիմոնեանի եւ մասնակցութեամբ Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեանի, Տ. Առնակ Քհյ. Գառապարեանի, Տ. Կարէն Քհյ. Կտանեանի, Տ. Մամբրէ Քհյ. Գուգուեանի, Տ. Գառնիկ Քհյ. Հալաւեանի եւ Բարշ. Միսաք Արկ. Քէհեայեանի:

Արժ. Տ. Առնակ Քհյ. խօսեցաւ տպաւորիչ դամբանական, ներկայացնելով հանգուցեալ Տիրամայրը:

Մարմինը ամփոփուեցաւ Վուսթօն գերեզմանատունը, իսկ թաղումէն յետոյ հոգեմաշ տրուեցաւ Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ:

Տիրամայրը եկեղեցասէր, աւանդապահ, նուիրուած ու հազուադիւս մայր մըն էր, որ հակառակ իր կեանքի դժբախտ պայմաններուն ու զրկանքին, գիտցած էր լաւագոյն դաստիարակութեամբ մեծցնել իր երկու զաւակները իբրեւ տիպար եւ նուիրուած հայեր եւ քրիստոնեաներ. իր տիպար հայ մօր մը հանգամանքով հանդիսացած էր իր տան սինը:

Իր մահը խոր վիշտ պատճառեց իր զաւակներուն եւ իր ընտանիքի լայն շրջանակին: Երկնային հանգիստ իր հոգիին ու մխիթարութիւն իրմով սգաւորուած իր պարագաներուն:

28 Յուլիս 1963

ԱՇԽԷՆ ԱՒԱԳԵԱՆ

«Սիոն»ի եմբագրութիւնը ցաւով կը հրատարակէ Ամերիկայէն հասած սոյն բլրապատկերներ եւ Տիրամայր Ազնիւ Գարիկեանի մահուան տոխրով, յանուն Ս. Արտոյոյ Դանակալ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան կը յայտնէ իր ցաւակցութիւնները մեր Միաբանակից եղբոր՝ Հոգշ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեանի եւ հանգուցեալի բոլոր պարագաներուն:

Երկնային հանգիստ իր հոգիին:

تصدرها - بطريقه الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول -- صاحب النافه رئيس الاساقفه هايكازون أبراهيميان
اغسطس ١٩٦٣
العدد ٨
تطبع في مطبعة دير الارمن - القدس

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Archbishop Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.